

12270

891.99
Z-49

ՅԵԱՓՈՒԱԿԱՆ

ԵՐԳԵՐ

2003

Հրատակություն Ա-գրասութե՛ք
Գ. Մարտիրոսյանի և Օ. Տեր-Մարգարյանի

ՏԻՇԵՑՔ

1917 27 - II

Ա.Ա.ՅԱՆԴՐԱԳՈՅ,
ՊՊՈՐԵԴ Ա. ՄԱԼԻՔՈՎՈՅՆՅԵ
1917

391.99

Հ 49

Ամ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ≡ԵՐԳԵՐ≡


100
100
100
100
100

Հրատակութիւն գրաւ սենե՝
Գեղարք Մարտիրոսեանի եւ Կամսար Տէր-Մարգարեանի.



Ըլքսանդրապոլ, Տ գարսն Մալիսասկանեան

1917



ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՐԳԵՐ

—■—

Մ Ա Ր Մ է լ ի է զ.

Հրաժարւենք, ընկերներ, հին օրէնքներից,
Նրանց փոշին թափ տանք մեր ստքերից.
Մենք պաշտել չենք կարող ունեն կուռքերին,
Գարշում ենք բռնակալ ժանտ ցարից.
Մենք կերթանք մեր հոլածւած

ընկերների հետ,
Մենք կերթանք մերկ, սոված բանւորների
հետ,

Դաւագիր թշնամուն մենք միշտ կանարգենք,
Ու կուի նրան դուրս կըքարշենք:

Դէս ելմիր, բողոքիր, այ բանւոր
գաստկարգ,

Դէմ ելէք թշնամուն, կուելու,

Ճնն եղբայրք,

Թող գրոհ տայ ամրոխն անվանի քաջ,
Առաջ, առաջ, առաջ ..

Հարուսաների մի անկուշտ վոհմակ
Կողոպտում է քո սուրբ աշխատանք,
Եւ պարարտացած գառն քրտինքովզ,
Խլում է հացի վերջին կտորդ.
Սովամահ եղիր՝ որ զւարճանան,
Սովամահ եղիր՝ որ խիզ, պատիւ
Խսառա մոռցած կեանքի խնջոյքում,
Ամօթաբար քեզ ծաղրի հանեն:

Դէս ելիր, բողոքիր... և այլն:

Դու հանգիստ կունենաս լոկ գերեզմանում,
Օք չանցնի՝ հարկերը չաւելնան,
Վամպիր ցարը կըտանջի քեզ իր զնդանում,
Վամպիր ցարը կարօտ է քո արեան,
Նրան պէտք են բիւր զինւորներ—
Դուրս քաշիր, տուր նրան զաւակիդ,
Նրան պէտք են խնջոյք, պալատներ—
Տնւր նրան հիւթերը ջիղերիդ:

Դէս ելիր, բողոքիր... և այլն:

Բաւ է, որքան ցաւ կըրեցինք մենք,
Այսուհետ պիտ կուենք հանապազ,
Հիւսիսից սկսած մինչև Արևելք,
Ալուգայից մինչև հեռաւոր Կովկաս—
Մեր, ոսոխ թշնամի հարուսաներին
Եւ վամպիր ու դաժան բիրտ ցարին,
Զարկ, Զարդիր նզովւած այդ չարերին,
Մինչ փայլի արել նոր կեանքին:

Դէս ելիր, բողոքիր... և այլն:

Եւ կըշողայ արնոտ արշալոյսին,
Արել սիրոյ, եղբայրութեան,
Նա զնւած արնով ժողովրդին,
Պիտ հասցնի նորան երջանկութեան.
Եւ կըզայ օրը սուրբ ազատութեան,
Բոնութիւն և չարիք ընդմիշտ կըկորչին,
Եւ համայն մարդկութիւն սերտ միացած՝
Վեհ աշխատանքին ջերմ կըհանգչին:

Դէս ելիր, բողոքիր... և այլն:



ԹԱՂՄԱՆ ՔԱՅԼԵՐԳ.

Դուք օրհասական կուռմ զոհւեցիք,
Ամբոխի սիրով անկեղծ տոգորւած,
Դուք ջանացիք վերջին շունչ տալ նրան,
Տեսնել նրա կեանք, պատիւն ազատւած:

Խոնաւ բանտելում հալումաշ եղաք,
Անխիղճ զատաստան ձեր դէմ վճուեցին,
Ուսի, դահիճներ անողոք, արնախում,
Շաշող շղթաներ ոտքիտ կուեցին:

Իսկ բոնակալը իւր ճոխ պալատում,
Վախը գինիով է ուղում մարել,
Բայց օրհասի երկաթեայ կուռ աջը
Մահւան խիստ վճիռ է նրան գրել:

Կընկնի բոնութիւն և կզարթնի
ամբոխը—
Քաջազօր, ազատւած և երջանիկ...
Իսկ ձեզ՝ բարի երթ, ընկերներ,
ձեր գործը
Ազնիւ, վեհ տարաք ձեր ճանապարհն:

Զեղնից յետոյ կըգան նոր, թարմ
մարտիկներ
Պատրաստ կուելու անձնազոհ քաջեր.
Դէն բարձվ մնաք, դէն բարձվ մնաք,
Ձեր վսեմ ուղին դուք պատւով անցաք:

* * *

Ազատ Աստւածն այն օրից,
Երբ հաճեցաւ շունչ փչել,
Իմ հողանիւթ շինւածքին
Կենդանութիւն պարզեցել.
Ես անբարբառ մի մանուկ
Երկու ձեռքս պարզեցի
Եւ իմ անզօր թևերովի
Ազատութիւն գրկեցի:

Մինչ գիշերը անհանդիսա
Օրօրոցում կապկապած
Լալիս էի անդադար
Մօրս քունը խանգարած.
Խոզում էի նրանից
Բազուկներս արձակել.
Ես այն օրից ուխտեցի
Ազատութիւնը սիրել:

Թոթով լեզւիս մինչ կապերը
Արձակւեցան, բացւեցան,
Մինչ ծնողըս իմ ձայնից
Խնդացին ու բերկրեցան,
Նախկին խօսքն, որ առացի
Գէր հայր, կամ մայր, կամ այլ ինչ,
«Ազատութիւն» դուրս թռաւ
Իմ մանկական բերանից:

«Ազատութիւն» ինձ կրկնեց

Ճակատագիրը վերևից,

«Ազատութեամն» դուն զինւոր

Կամիս զբւել այս օրից:

Բ'հ, փշու է ճանապարհ,

Քեզ շատ փորձանք կսպասէ.

Ազատութիւն սիրողին

Այս աշխարհը խիստ նեղ է:

—Ազատութիւն,—գոչեցի,

Թող որոտայ իմ գլխին

Փայլակ, կայծակ, հռւը, երկաթ,

Թող դաւ դնէ թշնամին.

Ես մինչի մահ, կախաղան,

Մինչև մահու անարդ սիւն,

Պիտի գոռամ, պիտ կրկնեմ

Անդադար ազատութիւն:

Միբայել Նալբանդեան.

Շ Է Մ Ք Լ.

(Արձակ բանասեղծութիւն)

Տաւզենեւից

Ես տեսնում եմ հսկայ շինութիւն:

Նախապատի նեղ դռնակը բաց է բոլորին:

Դռնակի խորքում թանձր խաւար:
Բարձր շէմքի առաջ կանգնած է մի աղջկկ... ոռւս աղջիկ:

Սառնամանիք է շնչում անթափանցելի խաւարից և նրա սարսուռ ազգող հոսանքի հետ միասին շինութեան խորքից լուսում է մի խուլ, դանդաղ ձայն.

—Օ, գուռ, որ կամենում ես անցնել այս շէմքով, զիտես, արդեօք, թէ ինչ է սպասում քեզ:

—Գիտեմ, —պատասխանում է կոյսը:

—Ճնարտ, քաղց, արգահատանք, ծաղր, ատելութիւն, վիրաւորանք, հիւնդութիւն... նոյն ինքը՝ մահը:

—Գիտեմ:

—Անջատումն, կատարեալ միայնակութիւն:

—Գիտեմ. ես պատրաստ եմ, ես կըտանեմ բոլոր հարւածները:

—Ո՞չ միայն թշնամիներից, այլ և ազ-

գականներից, բարեկամներից:

—Եւ նրանցից:

—Լաւ, դու պատրաստ ես և զոհւելու:

—Այս:

—Անհետ զոհւելուն. դու կը կորչես և ոչ
ոք չի իմանալ անգամ, թէ ում յիշատակը
տօնի:

—Ինձ պէտք չէ շնորհակալութիւն, և ոչ
էլ խղճահարութիւն, հարկաւոր չէ ինձ և ոչ
մի անուն:

—Պատրաստ ես դու անգամ յանցանք
դորձելու:

Աղջիկը խոնարհեցրեց գլուխը:

—Պատրաստ եմ և յանցանք գործելու:

Զայնը իսկոյն շշարունակեց իր հարցերը:

—Գիտես, —իսուեց նա վերջապէս, —դու
կարող ես հիասթափւել նրանից, ինչին հա-
ւատում ես այժմ, կարող ես ուշի դաւ, որ
մոլորւել ես և իղուր կորցրիր մատաղ հա-
սակդ:

—Գիտեմ ես և այդ, բայց այնուամե-
նայիւ, ուզում եմ մտնել:

—Մտիր:

Աղջիկը անցաւ շէմքի վրայից և ծանր-
փակը շառաչեց նրա յետեից:

—Ցիմար կինարմատ, —մոնչաց մի ոմնե
նրա յետեից:

—Առւլը կին, —որպէս պատասխան՝ լըս-
եց այլ տեղից:

ՌԱԶՄԱԿԱՆ ՔԱՅԼԵՐՔ.

Անվախ ընկերք, քայլենք շար-շար,
Գուլում հոգով ամրանանք,

Ազատութեան վեհ ճանապարհ*

Կրծքով հարթենք մեզ համար:*

Մեր օրբանը՝ աղքատութիւն,

Մեր ծնողը՝ աշխատանք,

«Եղբայրութիւն, ազատութիւն»—

Սյու լինի մեր դաւանանք:

Եղթանելում շատ տաճնեցինք,

Շատ էլ քաղցած մնացինք.

Մե օրերը ահա անցան—

Հասաւ ժամը հատուցման:

Ժամ է այժմ էլ գործի զիմել,

Դէպի կոիւ սլանալ.

Մեզ՝ քաջերիս, չէ էլ վայել

Ցարից երբէք վախենալ.

Այն, ինչ պահում էր նոցա գահն—

Գործն է ձեռքի բանւորի.

Ինքներս ենք լցնում փամփուշտներ,

Հրացաններին կապում ուին:

Տապալենք մեր հզօր բազկով

Գանձ բռնակալ ցարի,

Եւ մեխենք մայր հողի կրծքին

Ալ գրօն աշխատանքի:

* Ըմեն տան երրորդ և չորրորդ տողերը կրկնել:

ԻՆՏԵՐՆԱՅԻԼ

Ելքը, անէծքի նշաւակներ՝
Քաղցի, ճորտերի ողջ աշխարհ.
Եռում է զայրոյթից մեր սրտեր
Մահւան կուի մղելու համար.
Բռնութեան աշխարհը մենք կաւերենք
Հիմնովին, ու մի նոր աշխարհ նորա տեղ՝
Մերը մենք պիտի հիմնենք,
Ով սորուկ էր՝ նա պիտ դառնայ տէր:
Այդ կլինի և վենջին
Եւ վճռական մարտ,
Ինտերնացիօնալին
Կըյարի ամեն մարդ:

Ոչ ոք չի տալ մեզ փրկութիւն,
Ոչ ցարը, ոչ հերոսը և ոչ Աստւած,
Իսքներս կըստեղծենք մեզ ազատութիւն
Մեր հսկայ ոյժով մենք սերտ միացած.
Որ տապալենք մենք բռնութիւն
Ու ձեռք բերենք երջանկութիւն,
Կոփենք, եկէք, բորբոքենք կըակ,
Քանի գեռ երկաթն է տաք-տաք:
Այդ կլինի և վերջին
Եւ վճռական մարտ,
Ինտերնացիօնալին
Կըյարի ամեն մարդ:

Մենք ենք միայն տէրն աշխարհի,
Հզօր զօրքը աշխատանքի.
Մենք պիտ լինենք ափողը երկրի,
Իսկ տզրուկները՝ երբէք, երբէք.
Եւ թող պայթի ահեղ որոտ,
Դահիճ գաղաների գլխով,
Ծագի մեզ համար արև մի նոր,
Փայլի իր սուրբ ճառագայթով:
Այդ կլինի և վերջին
Եւ վճռական մարտ,
Ինտերնացիօնալին
Կըյարի ամեն մարդ:

ՈՒԹԻ ԺԱՄ.

Աղպէրք, էլ ոյժ չըմնաց մեր մէջ,
Մենք չափազանց շատ յոզնեցինք,
Կեանքի համար կուել անվերջ—
Սա էլ կեանք է, որ քաշեցինք:

Օ՛դ ենք ուղում, կարմիր արե,
Ծաղիկ, աղբիւր, անուշահամ.
Ազատ, վստահ, եէք յայտնենք՝
Պահանջում ենք միայն ութիւն:

Գործարանում ու հանքերում,
Ամրոխի մէջ, ժողովներում,
Հուժկու ձայնով դուք կոչ արէք՝
Պահանջում ենք ամենուրեք—

Ութիւն աշխատանք,
Ութիւն քուն,
Ութիւն հանգստութիւն:

Դաշտում անգամ մեր եղները,
Թռչունները ջինջ եթերում,
Սար ու քօլում գազանները՝
Բաղդաւոր են մեզնից ապրում:

Թէ այդպէս է, էլ ինչու ենք
Ապրում, եղբարք, այս աշխարհում:

Եկէք, շարք-շարք միանանք մենք,
Մեր պահանջը կուով տանենք:

Կուով տանենք, այդպէս ցոյց տանք
Թէ ոչ ոքից չենք վախենում.
Հուժկու ձայնով, դէն, կոչ արէք,
Պահանջում ենք ամենուրէք՝
Գործարանում ու հանքերում,
Ամրոխի մէջ, ժողովներում,

Ութիւն ժամ աշխատանք,
Ութիւն ժամ՝ քուն,
Ութիւն հանգստութիւն:



ՎԱՐՇԱՎԵԱՆԿԱ.

Ճաշում են սիսերիմ հողմերն անընդհատ,
Մե, մութ ոյժերը կատաղի ձնչում,
Նորանց գէմ վարում ենք օրհասական մարտ,
Անյայտ մի վիճակ է մեզ դեռ սպասում.
Բայց մենք կըպարզենք անվախ ու հպարտ
Բաղմի զրօշակը՝ բանւորի ազատ,
Դրօշակը մեծ գործի ժողովրդական,
Յանուն նոր կեանքի՝ սուրբ ազատութեան:

Դէպի մարտ արեան,
Արդար, սրբազան,
Քայլեցէք առաջ,
Բանւորներդդ քաջ:

1001/4
1001/9

Մեռում է մեր օրում բանւորը սովից,
Հնկերներ, միթէ էլի համբերենք,
Մեր անվախ կարիչները կախաղաններից
Հերոսին վայել՝ չեն սարսիլ երբէք.
Հնկնելով յանուն վեհ գաղափարի,
Զեն կորչի անհետ պատի զոհերը,
Նոցա անունները երգերով պանծալի
Դը յիշեն յետնորդ մեր սերունդները:

Դէպի մարտ արեան,
Արդար սրբազան,
Քայլեցէք առաջ,
Բանւորներդդ քաջ:

Ստելի է թագը բռնակալներէ,
Ամբոխի շղթան միայն պաշտելի,
Նորա արիւնով ողողած գահերը
Մեր ոսոխների արեամբ կըներկենք.
Արէժ ու հի անողոք բոլոր պիղծերին,
Բանւորի արեան կարօտ ցեցերին.
Արէժ, վրէժ ու մահ բոլոր հարուստներին,
Մօտ է յաղթութեան ժամը փառաւոր:

Դէպի մարտ արեան,
Արդար, սրբազան,
Քայլեցէք առաջ,
Բանւորներդդ քաջ:



ԴՐՈՇԱԿԱԼ

Գ. Վեասլինից.

Երազ տեսայ՝ թէ գարկւած եմ կռւի մէջ,
ու արնաքամ եղած վէրքից,
Կամաց ընկնում... գլորում եմ իմ դիմքից,
Եւ դրօշը ցողած իմ ջերմ արինով—
վայր եմ ձգել իմ ձեռքից...
Եւ դու, քոյրիկ, այդ նեղ ժամին վրայ
հասար, նրան խսկոյն փրկիցիր,
Ամբոխի մէջ նորից հապարտ պարզեցիր.
Տեսայ ես քեզ առիւծի պէս խոյալով
Զգտում էիր զէպի առաջ ամբոխի հետ
գրոհ տալով,
Մինչ որ ընկար, որպէս և հս...
Եւ դրօշը ներկւեց քո ջերմ արինով:
Ո՞խ, ես տեսայ՝ ինչպէս նորից անվիատ,
իիդամ, եռուն ամբոխի մէջ մեր
դրօշը հարազատ,
Հնկերները մի վայրկեանում արնոտ
ձեռքիցդ են առնում,
Նորից կռւի մէջ նետւելով և բաղխուում
են և մեռնում...
Եւ դեռ երկար ծածանուում էր մեր
դրօշը մարտական,
Քաջի նման մէրթ բարձրանում, մէրթ
ընկնում.

Եւ նրա ալ թերի մէջ իմ արեան հետ
առնական,
Տեսնում էի՝ դեռ ըլսառած քո արինն
էր շողջողում...
— — —

ԱՂՋՈՅՆ ՔԵԶ, ԿԱՐԻՔ...

Զգիտեմ, ով է դանակս բաղխում...
— Այդ գմւ ես եկել, այ դաժան կարիք,
Գերեզմանների բնակչիդ ողջին,
Հպարտ իմ հոգուն գալըդ է բարիք,
Եւ քեզ, օ կմախք մահւան բօթաբեր,
Դիմաւորում եմ ահա անտարբեր:

Բայց ինչու լուռ ես, բռնակալ ոգին,
Է՞ր չես շապաւմ մտնել իմ խրճիթ,
Դէհ, շնւա, թերս ջարդիք, անհոգին,
Ցցիր մազիլներդ սրտիս մէջ վլճիտ
Կանգնիր խեղճ մօրս մահճի գլխատակ,
Որպէս մահաբեր հոգիառ հրեշտակ:

Դու տատանւում ես, կմախք այլայլւած,
Թէ խնայում ես գարունը կեանքիս,
Օ՛, անհոգ կացիր, չեմ ընկել յաղթւած՝
Կեանքի զոռ մարտում ծաղիկ հասակիս.

Տարիքների մէջ, տանջանքի բովում,
Կամրանայ հոգիս, կըփթթի գարուն:

Իմ մըրբկածուփ, չարատանջ կըրծքում
Սըրտի յոյսերը գեռ անհանգչիի,
Երկնից անսահման, անհուն բարձրունքում
Սըրտիս թոփչքն է անհասանելի.
Որքան էլ նայես, խիստ, մոայլ դէմքով,
Ես պիտի շընչեմ իմ սիրած կեանքով:

Աղա նեղի-

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ.

Տեսել ես, ընկեր, ալեկոծումը ահեղ
ովկիանի,
Ուր երկու ալիք շարժուն սարի պէս
իրար են վաղում, իրար են վաղում,
Երար են վաղում փրփուրը բերնին
յովազի նման
Ու յոխորտալով զարնում ու յուզւում,
բաղիւում, փշրում աւազի նման
իսկ երբ անցնում է վրէժի բովէն
յուզումը վայրի,
Տեսել ես, ինչպէս հանգստանում է
հական ջըրերի.
Մեզմանում է նա... մանուկի նման
ժպտում է ալիք,
Ալիքի միջից մի երգ աննման, ծփալով
մեղմիկ—շոյում լսելիք...

*
Լսել ես, ընկեր, ըմբուտ երկընքում
կոչը որոտի,
Որ դզբուում է որպէս մի պայթիւն
մէծ թնդանօթի.
Տեսել ես, ինչպէս ամպերի կըծքին
կայծակը զիգ-զագ
իր սիզն է միտում փութկոտ, շեշտագին
ու ցընցում աշխարք-

Կամ ինչպէս թափով ծառս-ծառս է
լինում ցանկոտ փոթորիկ,
Հոկայ ծառերին չոքէ-չոք անում
գարձնում խաղալիք.
Մինչ որ տեղում է հեղեղը վայրագ—
և ինչպէս փրկանք
Շանըր երկունքից ազտում աշխարք.
Բնութիւնը յաղթ ժպտում է ապա
պայծառ արեգին—
Որդէս պատասխան չար արհաւերքին...

*

Լըսէլ հս, ընկեր, ծնընդականի ճիչը
յուսահատ,
Որ գալարւելով արգանդի ցաւից պոռում
անընդհատ...
Վիրաւոր ընկած այն էզ առիւծն է
այնպէս մոընչում,
Երկունքի ժամին մեծ ազատութեան
օգնութեան կանչում.
Կեանքի և մահու պայքարը մղող
այն մայրն է տանջւող...
Իսկ երբ հանում է յուսոյ բաղդաւոր
ժամը փրկաւէտ,
Տեսէլ հս, ինչպէս այդ խորհրդաւոր
վիճ պայթումից յետ
Մի վսեմ, խաղաղ մայրական ժպիտ—
Փայլում է նրա արնոտ շվթերում—
գէմքը զարդարում...

*

Այդպէս պիտ լինի և այն վեհ ժամը
Յեղափոխութեան,
Երբ որ կըրադիւեն իրար հակառակ
երկու ախոյեան.
Ալիքի նման պիտի մոընչան երկու
հըզօր ոյժ,
Ծխարհը ցընցեն ու դարձնեն կործան
կարգերը վատոյժ.
Վայրագ հեղնդին, շանթ ու փոթորկին
տեղի պիտի տայ հեղեղ ցընծութեան,
Երկունքի միջից մանաւկը ծընէ մեծ
ազատութեան...
Քնկեր իմ, ընկեր, հեռու չէ օրը,
այսօր չէ՝ վաղը
Նա պիտի լինի անխուսափելի...
Պատրաստէր կըծքով ընդունել նրան...



Смѣло, друзья, не теряйте!

Առաջ, լնկերք, մի վհատւէք,
Անվախ նետւենք դէպ կոիւ.
Մայր-օրբանը եկ, ազատենք,
Փրկենք մեր կեանքն ու պատիւ:
Թէ պատահի, որ մենք մեռնենք
Աքսորում կամ բանտերում,
Գործն է անմահ՝ այն կըթողնենք
Սերունդների սրտերում:

Թող բանտերում մերոնք մաշւեն,
Թող այրեն մեղ կըակով,
Աքսորավայր թող մեղ տանեն—
Պատժեն մահով, տանջանքով:

Թէ պատահի, որ մենք մեռնենք
Աքսորում կամ բանտերում,
Գործն է անմահ՝ այն պիտ թողնենք
Սերունդների սրտերում:

Խեղճ ամբոխը հեծում, տնքում,
Զարչարւում է, հառաչում.
Իր ձեռքերը մեղ է մեկնում,
Օգնութեան է մեղ կանչում:

Թող պատահի, որ մենք մեռնենք
Աքսորում կամ բանտերում,

ՄԵԿ ԵԼ, ՄԵԿ ԵԼ...

ՀԵՅ, ձեզ մատաղ, բանւո՞ր տղերք,
ՄԵԿ ԵԼ, մէկ էլ, մի զարկ տւէք.
Մի զարկ տւէք ցարի զահին,
Որ խորտակւի նա հիմովին:

Միահամուռ մեր ջանքերով,
Հերոսների արեան գնով,
Թէկ ընկաւ ցարն իր զահից
Բայց չի ջարդւած միանդիմից:

Այժմ էլ ցարն է մեղ աղաչում,
Որ ինայենք վերջին շնչում.
Բայց ձեզ մատաղ, բանւո՞ր տղերք,
ՄԵԿ ԵԼ, մէկ էլ, մի զարկ տւէք,
Մի զարկ տւէք ցարի զահին,
Որ խորտակւի նա հիմովին...



Գործն է անմահ՝ այն կըթողնենք
Սերունդների սրտերում։

Կըգայ ժամը ազատ օրի,
Ամբոխը մեզ կ'երգէ հիմն
Բարի խօսքով միտ կըբերի
Աւ կայցելի մեր շիրիմն։

Ե՛ն, թո՛ղ լինի, որ մենք մեռնենք
Աքսորներում, հանքերում,
Գործն է անմահ՝ այն պիտ թողնենք
Սերունդների սրտերում։



ՄԱՅԻՍԻ ՄԵԿԸ.

Գարնան յուսատու, այս ուրախ օրին
Դուրս ելէք խումբ-խումբ, բանւոր
ընկերներ,
Եւ ողջոյն տալսով դաշտ ու ձորերին,
Երդէք ձեր ազմտ, տօնական երգեր։

Դու արձագանքը ձեր յաղթ երգերի,
Թո՛ղ սարսափ ազդի թշնամու սրտին.
Թո՛ղ ցընցի հոգին բանաւորների,
Հանգիստը խլի ճընշող հարուստին։

Գարնան անզբանիկ մեր այս տօն օրին
Պահ մի մոռանանք վիշտը բանւորին.
Մեր ցաւն ու հոգսեր սար ու ձորին տանք,
Եզատ երգերով գովենք աշխատանք։

Եւ թո՛ղ խլանայ ձայնը բռնութեան—
Ազմուկ չըլսւի գործարաններից.
Եյսօր մեր տօնն է վեհ գիտակցութեան—
Թող պայթի աղան յամառ զայրոյթից։

ԵՄ ԶԵԶ ԱՍՈՒՄ ԵՄ...

Յս ձեզ ասում եմ, կը գայ այն օրը,
Երբ ամեն մի մարդ—աղա թէ բանւոր
Իր աշխատանքի կը գանայ տէրը,
Ու աղատ, անհոգ, կապրի բաղդաւոր:

Նենդաւորների դժնդակ սրտից
Կիբըլ մարդկային կը կորչի անհետ,
Կը լուի «Խոը» շանթւած ամօթից
Ու գային ու գառը կապրեն իրար հետ:

Ու էլ չի տիրիլ անարդ ըստակը,
Մարդուն մարդոյ դէմ չի զինիլ անվերջ-
Ամբիոն կելնի արդար վաստակը,
Քրար յօշոտող կուին կտայ վերջ:

Յս ձեզ ասում եմ—մօտ է այն օրը...
Թո՛ղ ըստրուկներին թւայ այդ երազ-
Նրան կը հասնի կուող բանւորը,
Մարտնչողների է դա հէկ մուրադ:



ՊՐՈԼԵՏԱՐԻԱՑԻՆ.

Ծնւած արգանդից ծով տգիտութեան
Բայց գիտակցութեան դու աւետաբեր՝
Առաջինն եղար յեղափոխութեան
Նշան տուղը, այ բանւոր աղպէր:
Կեանքի անիւը շարժող վիթխարի,
Չուղեցար մօհտանջ լինել նամարդին.
Ու նետեց մուրճը բաղուկդ արի,
Գործադուլ գուժեց անարդ հարուստին.
Հարուստը սոսկաց... և զիջեց կամքիդ,
Նև հըզօր բազկիդ-
Այս, երկաթ մաճիդ դուրբա՞ն,
Բանւո՞ր ջան:

Ճչաց Մոլոխը, հէնց որ իմացաւ
Աջուախն լուրը քո յաղթանակի,
Եւ վրէժն արեամբ լուծել կամեցաւ,
Բայց զու գայրացար, որպէս փոթորիկ,
Չուղեցիր զիջել յաղթը անդրանիկ,
Ու կըսի ելար ընդդէմ բռնութեան,
Յանուն նամուսի—պատի անունով
Զոհերի գընով.
Հէյ, քո թասիրին դուրբա՞ն,
Բանւո՞ր ջան:



Բովւած հնոցում քաղց ու կարիքի,
Սովոր բանտերի, բիրտ հալածանքի,
Շատ ևս գիմացել—գիմացիր էլի
Եղբայր սիրելի,
Հաւանա ունեցիր յաղթիդ վերջնական.
Այսօր չէ վաղը, վաղը չէ միւս օր
Քոնն է ապագան։
Իէն, ջերմ հաւատիդ դուրբան,
Բանուո՞ր ջան։



Խոսուն ու գոհ շնորհ առաջ
Կամաց առաջ առաջ ամառ և
Խոսուն ու գոհ շնորհ առաջ առաջ
Կամաց առաջ առաջ առաջ առաջ
Խոսուն ու գոհ շնորհ առաջ առաջ
Կամաց առաջ առաջ առաջ առաջ
Խոսուն ու գոհ շնորհ առաջ առաջ
Կամաց առաջ առաջ առաջ առաջ

ՄԵՌԱՆ-ԶԿՈՐԱՆ...

Ինչպիսի հերոս ընկերներ մեռան,
Մեռան՝ չըկորան...
Կրակն էր ցայտում նրանց աչք-ունքից
Շանթը՝ շրթունքից,
Նզր խօսում էին ծով ամբոխի մէջ
Վիշտ ու կարիքից.
Վրէժի, ցասման հրով բորբոքած.
Նոքա բեմ ելան
Եւ բեմը դարձաւ արիւնով ներկւած։
Զոհերի սեղան։
Ինչպիսի հերոս ընկերներ մեռան...

Այսօր բանտերում, վաղը՝ աքսորում,
Միւս օր կախաղան
Հանելու համար դահիճը դաժան
Կացինն է սրում.
Քայլ հերոսների շուրթերից սեղմւած
Նզովը չէ լսում,
Քաժակն են ըմպում վերածընութեան՝
Միւներին կախւած.
Ու հիմնը երգում յեղափոխութեան՝
Հպարտ շղթայւած.
Ինչպիսի հերոս ընկերներ մեռան...

ՀԵՅ, ազատութեան անպարտ զինւորներ,
Դուք որ անխռով
Ներկեցիք փողոց ու գործարաններ
Զեր տաք արիւնով,
Նոյն վայրում այսօր ջահել-ջիւաններ
Բմբոստ շարքերով
Զեր գովքն են անում... ձեր թափւած արեւամբ
Յնուում, ամրանում...
Եւ զերթ անմահներ երդում ձեր անւամբ
Ու ճպարտանում.
Որ դուք յիրաւի պատով, վեհութեամբ
Զեր գործը տարաք
Մեռմք, չըկորաք...



Հայութ կանաչ նախաւուան կամ Ա
Տարախ ու ունի
Անեար համեար զանու ուժեան
Հայու չ մահան
Տամար ազդեան աշաւուու զամ
Անու չ պարա
Համար անուան ան պահան
Տամար մարդուաց
Տամար ազդեան անու զամ
Անու պարա

Ա Շ Ո Ւ Ղ Դ.

Ասի՞ աշնող, առ չունգուրըդ, մեզ բան
ասա սրտալի,
Կարօտ ենք բու անուշ ձէնին, մի
բան ասա սրտալի
Որտի խօսք ենք ուզում քեզնից,
որ վեր հանի մեր հոգին,
Առ չունգուրըդ, դարդոտ աշուղ,
մեզ բան ասա սրտալի

Գիտենք, որ դու միշտ տանջւում ես
հազար ու մի ցաւերով,
Հայրենիքիդ խոր խոցերը համարում
ես դարերով.
Զես լւանայ էդ խոցերը արտասունքի
ծովերով...
Առ չունգուրըդ, ցաւո՛տ աշուղ, մեզ
բան ասա վշտալի

Լուռ մնալով մեր վէրքերին դու չես
անի դեղ դարման,
Որար-աշխարհ գիտի՞ չըկայ մեր
դարդերին չտփ, սահման
Մնջութիւնն էլ նշան հօ չէ մի գովելի
յատկութեան—
Առ չուզուրըդ, մեզ բան ասա, թող
խօսքդ ընի ցաւալի

Էղպէս խօսքեր շատ ենք լոել,
Էլ կըլսենք անտրտունջ,
Մեր չըխօսկան ընելոցն է՝
մնացել ենք անտէրունջ,
Լաւ է ազատ լաց ըլնիլը, քան դարդ
անհիլն անմոռւնչ,
Ասա՝ լսենք, ի՞նչ անհնք, որ խօսքը
կ'ըլնի ողբալի:

Տեսնում ես, որ մենք թմրած ենք,
քունն անուշ է մեզ թըւում.
Է՞ր էս դուն էլ մեզ ըսլորիս մաշող
ըլնիցն յաղթըւում.
Ա՛ռ չունդուրդ, առուր լարերին, կրակ
վառիր մեր սրտում,
Մեզ ամենիս նոր շունչ աւող մի
բան ասա սրտալի:
Յովի. Յովիաննիսեան.



ՔԱՅՈ ՅԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ո՞հ դու ազատ խօսք, ո՞հ դու
անմահ խօսք,
Լուսատու դու ջահ անցեալի մըթնում.
Դարեր շարունակ, մաշւեցիր գերի—
Եղթաների տակ աքսորում, բանտում:

Դատավաբանեցին և հալածեցին,
Տըրեցին ոտքով և հայոյեցին,
Այրում էին քեզ դահիճի ձեռքով—
Բայց չըլուցիր՝ ազատ հընչելով:

Ո՞հ դու ազատ խօսք, ո՞հ մեծասքանչ խօսք,
Զար անզղի ձանկում գերի դարերից,
Քարափին գաււած սուրբ Պոօմեթէոս,
Զգում ես թըռչել դաժան շըղթայից:

Բայց կընկնի շըղթան ու դու կըթոչես,
Եւ ճըշմարտութեամբ ու սիրով ուժեղ
Արեծագի հետ աշխարհի վերայ
Յաղթական գոչով քո և ըզը կ'երգեստ
Որպէս Աստուծոյ շընծագին որոտ:

Օ Զիւմինա — Թարգ Գ. Մ.



ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԶԱՆԳ.

Ազատութեան զանգ, դու վեհ զօղանջէ,
Իովկասիան վրսեմ, վէս բարձրունքներից,
Հնչպէս մըրըրիկ շաչէ, շառաչէ
Մինչև սիլապանծ ազատն Մասիս:

Անհուն վրէժի և բմբոստացման,
Յւ բուռն ցասման բարբառը հընչէ,
Ժողովուրդների անկախ, ինքնիշխան՝
Դաշն ազատական խըրոխտ զօղանջէ:

Լեռներից խըրճիթ, և ձորերից-ձոր,
Յւ ոըրտերից-սիրոտ ձայնը թո՞ղ թըռչի,
Յւ ընդվզգումի պատզամըդ հըզօր
Յաւիտեան անլուռ, երբէք թող չհանգչի:

Բմբո՛ստ ողիներ, թե առէք, հառէք,
Յւ զանգահարենք ամո՛ւր, միահամո՛ւռ,
Զանգն ազատութեան զանգահարեցէք,
Կովկասի համար, հանուր, ընդհանուր:

Աւ, Խահիակե սն.



ՊՂՃՌՅՆ ԶԵԶ.

Պղջունում եմ ձեզ, ով ժիր գութանիաց ով
Հարքանց հերոսներ,

Ու թէ որոտի, թէ տապ արևի
Ճաճանչների տակ

Ոյժով խլում էք ազահ, կոշտ հողից
Զեր հացն ու վաստակ:

Պղջունում եմ ձեզ, ով աշխատանքի
անխռնջ հսկաներ,

Ու գիշեր ցերեկ հազիւ շնչելով
լեռնահանքերում,

Քլունգ էք միում խաւար, անիծեալ
Հողի շերտերում:

Յանկարծ չարագուժ ջըրի վըշշոցը
լուեց մօտիկից,

Ալայրկեան—և ահա կամարը անյաղթ
տապալւեց ուժգին,

Զոհի գիտին է լողում անզընդում,
Ոզրում անմեկին:

Բայց և ձեղքւած է ու բացւած կուրծքը
յամառ, լերկ սարէ

Յւ շոգեկաթսան վազում է միջով
յաղթական անցքով:

Յւ արշալոյսին դիմաւորում է
Պղջագուրանքով:

Ողջոյն ձեզ, ողջոյն, հոյակապ խելքի,
մտքի ասպիտներ,
թշւառ ամբոխի դուք նահատակներ,
ուղեցոյց աստղեր։

Որ չարիքի դէմ միշտ կոչ էք անում
Անվիրջ մարտ մղել։

Ողջոյն նոցա, որոնք տոգորւած
ազնիւ վաստակով,
Հալւում են, մաշւում հանգիստ չիմացող
անյայտութեան մէջ-
Ձեզ, «ողով արի» ցըւած եղբայներ,
սրտով զողոցուն
Օրհնանք և ողջոյն։

* *

Ողջունում եմ ձեզ, երկաթի կրծքեր,
Որ մինչև գագաղ անընդհատ գործում
Աւ չէք էլ յոգնում խուլ ժխորի մէջ—
Արհեստան ոցում։

Ողջոյն և նոցա, որոնք գտնում են
Միակ սփոփանք աշխատելու մէջ.
Չութի, քըլունգի, մտքի վինւորներ,
Ձեզ ողջոյն անվերչ։

Տեսնում եմ ահա վաստակաւորներ,
Նիբնում են յօգնած, քնով կախարդած
Անթիւ նաւերի լցւած կմախքներ,
Ալիքից չարգւս ծ։

Բոկոտն մանուկներ, ծերուկ ճակատներ,
Ս ովալըլուկներ ու հաշմանդամներ,
Թոքախտաւորներ, գունատ, վշտահար
Քայլում են յամառ։

Նրանց ձայները լսում եմ հեռւից,
Նրանց ճանաչում ծանօթի բառերից,
Նրանց աղմուկով—որ մօտ է սրտիս—
Հրճւում է հոգիս։

Ով աշխատանքի անպարտ հերոսներ,
Ես ձեզ եմ երգում, ձեր սերտ միութեամբ
Բնդ միշտ եղէք մեծ, կուեցէք քաջ-քաջ—
Կեանքըն է շատ կարճ։

Օրհնւած վաստակի մայր-անդաստանին,
Կանգուն թէ ընկած նահատակներին
Կիայլեն անմահ աստղեր, արեգակ,
Որպէս Աստուծոյ աչալուրջ հայեացը։

Աղա նեզրի.



ՍԱՐՆ Ի ՎԵՐ.

Դէպի վեր, դէպի վեր... Անվերջ է ուղիս-
Յոգնեցան բազուկներս այս կռւումն անզօրք
Սպառեցաւ և վերջին ոյժն էլ ծընկներիս—
Դէպի վեր, սարն ի վեր, քաջամիրտ
զինւոր:

* *

Աւելի կարծրանան թող այս սև ժայռեր,
Աւելի թող սպառնայ անդունդն ահաւոր,
Դեռ շունչ կայ բերանումս, շարժւում
են ձեռքեր—
Դէպի վեր, սարն ի վեր, ո՛վ արի զինւոր:

* *

Դեռ հեռու է կատարն անամպ ու յստակ,
Բայց եթէ չըհասնենք այնտեղ մենք այսօր,
Վաղն այնտեղ ենք անշուշտ, մերն
է յաղթանակ—
Դէպի վեր, սարն ի վեր, անվեհեր զինւոր:
Յսվի. Յովիանեիթեան.



ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՄԱՐՇ*)

(Նւեր հայ բանւորներին)

Թող փըշրի լուծը անարդ բանութեան
Եւ փայլի արև սուրբ ազատութեան.
Կեցցէ, կեցցէ, մեր ուխտը—
յեղափոխութիւն:

Թող ընկնի բուրժուան ցեցը մարդկութեան,
Ծածանի դրօշը լոյս ճշմարտութեան.
Կեց ցէ, կեցցէ, աշխատանք և բանւորութիւն:

Թող ջարդւին շղթայք ցած ըստրկութեան,
Եւ իսպառ կորչի հետքը բոնութեան.
Կեցցէ, կեցցէ, միութիւն և եղայրութիւն:

Թող երդում կարդայ բանւորն ընկած
Եւ ուխտ կատարէ թշւառն հալածւած.
Ար կոփւ մղէ ընդդէմ թշնամեաց—
Յանուն փրկութեան իւր թշւառ եղբարց:

Կեցցեն եղբայրք մեր բանւորք,
Կորչին անարդ բոնաւորք:

Բանւոր.

*) «Ազատ Հայաստան»—Օրդան հայ բանւորք
յեղափոխականների ասացիացիացի. 1893 թ. № 4.

Յ Ա Ռ Ա Հ

Ա. Պլեչէեւից.

Յառաջ աներկիւղ, առանց վարանման,
Եղբարք, դէպի գործ դիմենք սրտալի.
Երկընքում արդէն մեր սուրբ քրիոթեան
Ես այդը տեսայ վառւած լուսալի:

Զեռք ձեռքի տւած յառաջ միասին
Ըսթանանք, եղբարք, վստահ ու անահ.
Եւ ապաւինած գիտութեան զրօշին
Թող մեր միութիւնն աճի, ամրանայ:

Մենք ճշմարտութեան ազատ բարրառուկ
Մեղք ու ստութիւն կը լատուհասենք,
Եւ քնչածներին զարթնցենելով
Դէպ ճակատամարտ յառաջ կը տանենք:

Եւ չենք ըստեղծիլ կուռքեր մեզ համար
Մենք ոչ երկնքում, ոչ երկըն վերայ.
Ամենայն բարիք թող տայ մեզ աշխարհ—
Երկրպագութիւն չենք անիլ նոցա:

Մենք մաքուր սիրոյ վարդապետ կ'ինփնք
Տըսանկ աղքատին, մեծատուններին,
Եւ զորա համար թող որ հալածւինք—
Կըներենք մեր թշնամիներին:

Երանին նորան, որ գոռ մաքառման
Ֆւ հոգսերի մէջ իւր կեանքն է մաշէլ,
Պըղերգ ու խարդախ ծառայի նըման
Ժւր քանքարն հողում անշահ չէ թողել:

Սուրբ ճշմարտութիւն վառած որպէս ջահ,
Թող մեր ուղեցոյց աստղիկը լինի.
Եւ հաւատացէք, աշխարհիս վերայ
Ազնիւ ձայնն իզուր չըպիտի անցնի:

Լսեցէք, եղբարք, ձեր եղբօր խօսքին.
Քանի մեր մատաղ եռում են ոյժեր՝
Յառաջ ու յառաջ դիմենք միասին—
Ենչ էլ բազզը մեզ վիճակած լինէր:

Թարգմ. Յովհ. Յօվհ.

ՍԹԱՓԻԱԾ ԲԱՆԻՈՐԸ

Հսկայ տիտանը զարթել է քնից,
Շարժում է առաջ որպէս մի առիւծ,
Բանտ ու կախաղան, մարակի հարւած,
Արդէն անոյժ են, ով մեծ բռնաւոր,
Կանգնեցնել այդ վեճ, յաղթական գնացք
Քնով թարմացած, նա ոյժ ստացած,
Հմբոստ, յանդուզն յառաջ է նետում,—
Գալիս է շանթել իր դահիճներին,
Պատուել ու դիմակ ոճրագործների
Եւ որպէս վրէժ տւած զոհերի—
Զարդել աըրորել նենգ բռնաւորին:
Դէն, յետ նահանջէք, բանւորն է գալիւ—
Այժմ նրանն է ոյժ և իրաւունք,
Դէն, ծունկ չոքեցէք, հսկան է զալիս:

ԵՄՒ-



ՃԼԻՍՍԵԼԲՈՒՐԳԵԱՆ ԿԱԼԱՆԱՒՈՐ
ՎՀԵՐԱ ՆԻԿՈԼԱԵԽԻՆԱ ՑԻԳՆԵՐԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ
Եթէ, ընկեր, գուրս գաս բանտից,
Ում սիրում ես՝ տեսնես, գրկես—
Չըմուանաս դու իմ մօրը:

Յանուն ամենի, ինչ սուրբ է երկրում,
Մաքուր, սիրելի և թանկ մեզ համար—
Իմ մասին նրան տեղեկութիւն տուր-

Ասա գու նրան՝ որ ես կենդանի,
Ու չեմ որոնում ինձ ուրիշ վիճակ,
Հաւատարիմ եմ իդէալներիս...

Այստեղ ըսկզբում ծանր էր ինձ համար—
Սոսկալի ճընշումն գառն անջատման
Ուզում էր փշրել ու խորտակել ինձ:

Բայց չըխորտակեց: Ել չեմ սարսափում
Ու որտումս այլես ես յոյսեր չունեմ
Մօրըս գըրկելու:

Չեմ խնդրում մօրս, որ նա սիրէ ինձ.
Քզզում է սիրտո՞ որ առանց խընդրի
Նա յիշում է ինձ, փափագում
Եւ իմ պատկերս սըրտի մէջ պահում:

Բայց թող չ'արտառւի նա ինձ յիշելով —
Աս ուրախ, կայտառ... Թող հարազատը
Զբանջէ տնձը դառն վըշտերով:

Աղօթքում միայն թող յիշէ նա ինձ,
Հեռուից օրհնանքով ճովանի լինի —
Որ խաչը ծանր իւր դուստրը տանի:

Ազատ բարգի. Գ. Խար.

Ե Ր Գ Չ Ի Ն.

Համեստ երգիչ, քո սըրտումն է
Այն անմեկին երկինքը.
Էսկիզը՝ վախճան և կեանք և մահ,
Նրանց անյայտ գաղտնիքը:

Ասա գու ինձ, այն կոփւը
Որ կոշւում է գոյութեան,
Պիտի խեղդէ իր արգանդում
Սմեն իդէալ, ամեն բան:

Ասա գու ինձ վերջին խօսքը,
Եյդ վրշապը պիտ կուլ տայ,
Այն սուրբ խաչը սիրոյ, գութի,
Որ բարձրացաւ Գողգոթայ:

Գողգոթայի նահատակը
Ի՞նչ աւանդեց աշխարհին.
Հաւատ, Յոյս, Սէր, թէ լոկ ցնորք
Նա պահ տըւեց տըկարին:

Սակայն երգիչ, հաւատ ունիմ,
Հաւատ զօրեղ այն խաշին —
Որ այլանդակ, բռնի ոյժեր
Սիրոյ առաջ պիտ կորչին:

Ար. Խնկոյեան.

Դա չուրաց ու այս նորուն իմ
Երանց պահան պահուն չ եղաք
Նորունիք, իմ չ եղաք ու
Առունիք. Ան չուրաց ուրանուն իմ ու

Դա չուրաց ու այս նորուն իմ
Երանց պահան պահուն չ եղաք
Նորունիք, իմ չ եղաք ու
Առունիք. Ան չուրաց ուրանուն իմ ու

Դա չուրաց ու այս նորուն իմ
Երանց պահան պահուն չ եղաք
Նորունիք, իմ չ եղաք ու
Առունիք. Ան չուրաց ուրանուն իմ ու

* *

Հնկեր իմ, եղբայր, ոռւ վաստակաբեկ
 եղբայր իմ տանջւած,
 Ով որ էլ լինիս դու, մի վճատիր.
 Թող հեծէ թշւառ, անարդարութեամբ,
 չարփով լցւած,
 Դառն արտասունքով ողողւած երկիր,
 Թող որ խորտակւած ոտնակոխ լինի
 քո սուրբ իդէալ.
 Թող անմեղների արիւնն յորդանայ,—
 Հաւատամ, եղբայր, կըգայ ժամանակ—
 կըկորչի Բատ,
 Եւ նորից երկրին սէր կըտիրանայ:
 ——————
 Ոչ շղթաների դաժան բեռի տակ,
 ոչ փուշ պսակով
 Եւ ոչ ծանր խաչ կորացած ուսին,—
 Նա աշխարհ կըգայ մի նոր զօրութիւնամք
 և մի նոր փառքով,
 Բաղդի պայծառ ջահն անյոզգողդ ձեռին,
 Եւ էլ չի մինի աշխարհում արցունք,
 ոչ թշնամութիւն,
 Ոչ մոոցւած շիրիմ և ոչ ըստրուկներ,
 Ոչ կարօտութիւն, անլոյս, մահառիթ
 ոև կարօտութիւն,
 Ոչ սուր, ոչ մահու խայտառակ սիւներ

Քիտեմ, իմ լնկեր, չէ մի պատիր յոյս,
 ոչ ցնորք վաղանցիկ
 Սիրոյ անձկալի գալուստը պայծառ.
 Չորս կողմըդ նայիր,— չափազա՞նց
 արգէն ճնշում է չարիք,
 Եւ խիստ է արգէն գիշերը խաւար:
 Տառապանքներից աշխարհը կ'ընկնաւ
 և կըթուլանայ
 Նա անմիտ կուից, արեան մէջ խեղդւած,—
 Եւ դէպի սէրը, մեծ սէրն անձնազոհ,
 աչքը կ'ամրառնայ,
 Աչքը՝ վշտալի աղերսով լցւած...
 Նազօնից—Յովի, Յովի,



Ե Ր Դ Ո Ւ Խ Մ.*

Օ. Սնէզինայից.

Օրը լուսանում էր արտասունքների ու ախրութեան մէջ: Գերեզմանատանը ծառերի ձները մեզմիկ տարուբերում էին ու սուափում իրանց տերենները: Զինը հալում էր և պղաոր առւակներ գոյացնելով վագում գեպի ցած ու նրա սպիտակ սաւանի տակից աւելի և աւելի որոշակի գուրս էին ցցւում գերեզմանների գէպի մի կողմ թեքւած խաչերը, գերեզմանաքարերը, արձանները: Հեռում, մառախուղի մէջ պարուրւած հրեշտակարձանը վեր էր բարձրացը ել իր մարմարէ խաչը:

Եւ առաւօտեան գունաթափ արշալոյսի մէջ ինչ որ տիսուր ու վշտացուցիչ բան էր նկատում:

Նոքա գերեզմանատուն եկան տիսուր, վշտահար ու խաւար գէմքերով: Կանայք ու տղամարդիկ, երէտասարդներ ու ծերեր—բոլորն էլ թաղման տիսուր քայլերդն էին երգում, որի խօսքերը պատոելով քնա-

թաթախ օդը՝ հեռուում հասածի արձագանք՝ ներ էին ծնեցնում...

Դուք զո՞ն գնացիք վճռական կուռում, ժողովրդի անսահման սիրոյն.

Դուք չխնայեցիք նրա կեանքի համար, Ո՞չ ուր, ոչ պատիւ, ոչ ազատութիւն...

Սև դագաղը՝ գետնին դրեցին, դրօշակները ծալեցին: Եւ ճնշող լոսութիւնը իր մեւերը տարածեց որբացած մարդկանց զլուխաների վրայ:

Եւ նախ բան ու հողի գունդը կընկէր դագաղի ծածկոցի վրայ, առաջ եկաւ մի ծեր, հիւանդոտ մարդ, բարձրացաւ գերեզմանաքարերից մէկի վրայ ու սկսեց խօսել: Նրա ձայնը,—ուժեղ ու ճնշին, մեծ լոսութեան խոռվ պատն էր ճեղքում և տարածում օղի մէջ: Գերեզմանաթմբերի ու գերեզմանաքարերի վըայ խկոյն երկացին մարդիկ, որորք ագանութեամբ լսում էին ծերուկի խօսքերը ու նոցա խոժոռած աչքերը հաւատով լի նայում էին նրա ծեր, արտասւալի, ցաւատանջ գէմքին:

Նա ասում էր.

—Այս սարսափելի առաւօտը, անդրոթգահճների ձեռքով կեանքից զրկւած մեր ընկերների գերեզմանների առաջ հրդւենք: որ քանի կենդանի է մեզնից գէթ մէկը. — կենդանի, ուժեղ ու անյալթ պիտի մնայ այն

Կործը, որին ծառայել են նոքա... Երդւմ եմ:

Եւ մարդկանց ահազին խումբը մի շնչով, մի հառաջով պատասխանեց.

—Երդւմ ենք:

—Այն գագաղի առաջ, որի մէջ ամփոփած է մի ծաղիկ, ուժեղ և փառաւոր կեաներերգենք, որ երբէք չենք զիջիլ մեր թշնամիներին, մինչև որ այն բոլոր պահանջները, որոնց առաջադրել ենք մենք, իկատար չեն ածւիլ: Մենք կուտենք մինչև մեր արեան վերջին կաթիւը, առանց զիջելու մեր թշնամիներին ընկերների սուրբ գիտկներով ծածկւած հողից մի փոքրիկ կտոր անզամբ Մեր զաւակների մէջ մենք կը մտցնենք իսկական, շօշափելի աղատութեան ծարաւ և մարտիկների ոյժ ու անվիճեր քաջութիւնը Երդւմ եմ:

Եւ մարդկանցով ծածկւած բլուրներն ու գերեզմանաքարերը պատասխանեցին.

—Երդւմ ենք:

—Երգւնեք, որ մեր փոխագարձ սիրոյ ամբողջ ոյժով այստեղ պառկած ընկերների վրէժը կուտենք թշնամիներից: Նոցա թափած անմեղ արեան տեղ կը վասւեն ճընշումների ու բռնութիւնների սատրապները: Վրէժ գահճներին... Վրէժ բռնականերին... Երդւմ եմ:

Եւ մառախլապատ, լաց լինող առաւօպք հաղարաւոր տիուր, ըայց հուժկու հլւէջներով պատասխանեց:

—Երդւմ ենք:

Եւ այդ խօսքերի հետ միասին զագաղիք և ծածկոցի վրայ ընկաւ սառը հողի վերջին բուրը, իսկ օդը գողաց տիուր քայլերգիք ուժեղ հնչիւներից:

—Եւ ժողուրդը կը զարթնի մի օր, Ազատ ժողովուրդ, վեհ և զօրաւոր...

Վ. Թումանեան.

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՁԵԶ.

Խաղաղութիւն ձեզ, սուրբ մարտիրոսներ
Որ կուի դաշտում ընկաք անվեհեր,
Դուք ջուր ու ցամաք արեամբ ներկեցիք;
Որ ձեր արիւնով փրկէք հայրենիք.
Դուք սուր առնելով, սըրով կամեցաք,
Փշրել բռնութեան շղթայ ու կապանք,
Բայց, աւազ, ձեզ հետ մեռան ձեր ըզձեր...
Խաղաղութիւն ձեզ, սուրբ մարտիրոսներ...

Խաղաղութիւն ձեզ, ազգի քաջ որդիք,
Սև հողն է այժմ ձեզ առել իւր գիրկ.
Ձեր արեամբ ցօղած սար ու գաշտերում
Ահա խնդալից նոր կեանք է նոռում.
Նորից փթթել է գարուն ծաղկաւէտ,
Բայց, աւազ, դուք էլ չէք փթթիլ յաւէտ.
Ճուրտ գերեզմանն է ձեզ առել իւր գիրկ...
Խաղաղութիւն ձեզ, ազգի քաջ որդիք:

Խաղաղութիւն ձեզ, հերնո եղբայրներ.
Թող չըվրդովւեն ձեր սուրբ նշխարներ.
Ձեր վերջին կամքը՝ «անէ՛ք թշնամուն»
Մեսք միշտ կըպահենք իբրև սըրութիւն.
Անէ՛ք և վրէ՛ժ—դոքա մեր միակ
Կըլինեն կեանքի հզօր նպատակ.
Քընեցէք խաղազ, հերնո եղբայրներ,
Թող չըվրդովւեն ձեր սուրբ նշխարներ...

Թարգ, Ա. Խատուեան

* * *

Ա՞խ մեր սիրալ լիքը գարդ ցաւ,
Օր ու արե չըտեսանք,
Վա՛խ, մեր օրը սեով անցաւ,
Աշխարհից բան չիմացանք:

Հարուստ մարդիկ կուտեն խմեն,
Աշխարհի ճոխ սեղանից.
Մեսք աշխարհի խորթ տղերքն ենք,
Մեզ փայ չըկայ աշխարհից.

Խեղճ աղքատը դառը դատի
Քատարկ նսափ, Էյ աշխարհ,
Էլ ինչո՞ւ ես քարը թողնում
Քարի վերայ, քար աշխարհ:

Խեղճ աղքատի հոգին գուրս գայ,
Քարից, հողից հաց քամէ,
Բեռով հացը հարուստին տայ,
Հարուստն ուտէ, վայելէ:

Ա՞խ մեր սիրալ լիքը գարդ ցաւ,
Օր ու արե չըտեսանք,
Վա՛խ, մեր օրը սեով անցաւ,
Աշխարհից բան չիմացանք:

Ա. Խատուեան

ՏԱՆՉԱՆՔԻ ԲՈՎԻՑ.

Վրայ բեր մուրճը պողպատէ սալին,
Ուժ տուր թեկրիդ, ջլոտ բազուկիդ,
Դէմ տուր սև կուծքդ կ'անքի տանջանքին,
«Տանջանքն» է բաժին սև ձակատագրիդ:

Բայց մի վհատիր քո չարքաշ կեանքից,
Զլկայ մի հանգիստ առանց տանջանքի
Մուսահատութիւն—հեռու քո մըտքից,
Զի ծնւի մանուկն առանց երկունքի:

Նորից նոր հարւած իջիր պինդ սալին,
Թանի գեռ ուժ կայ կոշտացած ձեռքումդ.
Մուրճի զարկերից թող թընդայ զետին,
Թանի գեռ կեանք կայ տանջւած կըրծքումդ:

Վրայ բեր մուրճը զօրացած թափով,
Փշըիր ամբակուռ օզեր շըդթայիդ,
Զէնք ու շղթային վերջ տուր մի թափով,
Վերջ քո չարատանջ մույլ օրերիդ:

Երկար տանջւեցիր քո ձեռքով կոփած
Պինդ շղթաների զընդանների մէջ.
Եւ դալուկ գէմքիդ ժըպիտը մարած՝
Կեանքըդ մաշեցիր տիղմի, փոշու մէջ:

Հերիք է ինչքան տանջւեցիր իզուր,
Զէ որ տանջանքն էլ իր վախճանն ունի.

Վաղուց ես քամում կեանքի սև մըրուր,
Ֆեղ կապող շղթան հերիք քեղ մաշի:

Արիւն քըրտինքը դալուկ ձակատիդ՝
Կեանքդ ես քաշ տալի ծանր բենի տակ-
Անողոք բաղդի վէրքը բաց կըրծքիդ՝
Հեծում ես քո խոր վըշտիցն անյատակ:

Բայց մի վհատիր դաժան քո կեանքից,
Ուժգին զարկ մուրճը պողպատէ սալին.
Զարկ թափով, փշէ կուռ շըդթան քեզնից,
Վերջ դիր անողոք քո ձակատագրին:

Գ. Մելոյեան.



Առաջին և երրորդ համարները առաջ կատարվել են առաջին աշխարհական պատճենի վեհական գործության ժամանակ:

**

Կուղէի՝ որ լոյսը փայլող այս
ազատութեան,
Թանձը խաւարի խորշերը լոյս տար,
Եւ ողջ մարդկութիւն հասնէր նըս մէջ
Բաղդի, բարիքի և երջանկութեան:
Որ եղբայրութիւն և սէրը մեր մէջ
Հանապազ, ընդմիշտ որ թագաւորէր,
Փայլէր մեղ վրայ լոյս ճշմարտութիւն,
Եւ արդարութիւնը որ մեզ հետ ապրէք:

*

Կուղէի՝ որպէսզի ամեն մէկը մեզանից,
Բաց անէր իրար իւր ամբողջ հողին,
Եւ այս փառաւոր օրը մեզ համար,
Ինչպէս իւր անձը սիրէր ուրիշին,
Հաւատար, ծառայէր ճշմարտութեանը,
Ալլէր, աշխատէր ուրիշի համար,
Եւ որ մեզանից ոչ մէկը երբէք
Զար գործ մտածել իրեն թոյլ չտար:

*

Կուղէի՝ որ գուք, մարդիկ, իմ եղբարք,
Որ ազատութեան այս վեհ գարնան հետ
Երջանկութիւնը՝ բարիք ձեզ ծաղկէր,
Խաղաղ անցնէին ձեր կեանքի օրեր,
Ոճագործ, ոսկեայ դաժան Բատլը—
Երբէք չըկանդնէր այլիս ձեր առջե,

Մարդկանցից ոչ ոք չըհամարձակւէր,
Նրան խոնարհւել մեզ մօտ, մեր միջն:

*

Կուղէի՝ որ կեանքը աշխարհի վրայ
Գեղեցկի, մաքրութեան մի օրէնք դառնար,
Եւ մարդկանց տեխանք՝ մի կայծ մութի մէջ,
Վեհ ազատութեան որ իւր փայլը տար:
Եւ ոչ ոճային՝ «Ես ինձ եմ ուզում»,
Եւ ոչ խայտառակ «իմը» խօսացէր,
Այլ եղօր համար, որին սիրում եմ,
Որ նրա համար ամեն ինչ կատարւէր.

*

Եկ, դժբախտացած, եղբայր՝ քաղաքացի,
Հըճւիր ձեռք բերւած այս ազատութեամբ,—
Հլու, հնազանդ է տիտան-իշխողը,
Դու ինքդ էլ այժմ անկախ ես, ազա՛տ:
Խելքդ քեզ կասի՝ համբադ գնայ վստահ,
Այժմ ազատ ես, էլ շղթայ չունես,
Ուրախ, համարձակ դու բախդ կոիր քեզ,
Որ այժմ մուրճը քո ձեռքում ունես:

Ազատ բարք, Գ. Մ.



ՀԱՆՔԱՀԱՆՑԻ.

Վաղենցինց

Գլուխն է ցաւում յոդնած ուսերին,
Զարկը զարկին է յաջորդում անփոյթ,
Եւ լոյս սփոելով մթին պատերին
Ճառագայթում է լամպարը աղօտ:

Զարկիր հանքահան, վիճակիդ խոնաբն,
Յիշիր, չես կոել զու բաղդ քեզ համար:

Փորում ենք ցերեկ, փորում ենք գիշեր,
Գիտնի սրտին ենք ձգտում յարաճուն.
Քարոտ խորքերից ջանքով աներեր
Գտել, հանել ենք մենք գանձեր անհուն:
Զարկիր հանքահան, մի լինիր ներհակ.
Գուցէ քեզ կոես երջանիկ վիճակ:

Ուհ, ինչ աղմուկ է, հառաջ, աղալակ...
Սև է մեր գործը և վտանգաւոր.
Այստեղ մէկը չէ մարել մեն-մենակ
Քարերի տակին կըծկւած անզօր:
Զարկիր հանքահան, վիճակիդ խոնաբն
Յիշիր չես կոել զու բաղդ քեզ համար:

Ծանր է մեր գործը, և երբ լոյս աշխարհ
Մենք դուրս ենք գասիս յոդնած ամբոխով,

Դաժան է մեր դէմք՝ թէկ քաղցրաբար
Կին ու երեխայ ձայնում են երգով:
Զարկիր հանքահան, մի լինիր ներհակ,
Գուցէ քեզ կոես երջանիկ վիճակ:

Սահում է կեանքը, իսկ գետնի տակից
Զարկը ճնչում է միշտ էլ չտփածոյ,
Թօշնում է ձեռքը երկաթ քլունգից.
Արտին կուտակւած հոգսը անհաճոյ:
Զարկիր հանքահան, վիճակիդ հոնաբն,
Յիշիր, չես կոել զու բաղդ քեզ համար:

Լսւում է ինչպէս մթին անկիւնում
Քիրա հոհսում է ողին հեղնաբան.
Ու փափսում է խոնաւ խաւարում
Խարում, գրգռում ականջը մարդկան:
Զարկիր հանքահան, մի լինիր ներհակ
Գուցէ քեզ կոես երջանիկ վիճակ:

Թարգ. Նորէ Կ.



*
*
*

Դու, որի համար զեռ ճառագայթով
ցերեկն է փայլում,
Գիշերն աստղալից պսակով անցնում
լազուր երկնքով,
Որին շնչել և ասլրել ո՛չ սարափն է
խանգարում՝
ՌՀ ցածը կամարը բանտի, ոչ շղթայն
ձեռքի,
Քարեայ գտգաղներից, և նեղ և ժանդոտ,
Ալեաց, գրանիտի և ալինների
հսկողութեան տակից,
Կոչերը մեռեների, ով Ազատ եղայլ՝
ահա, ընդունիրք
Այս՝ մենք խլւած թշնամիներից,
Մեր հայրենիքից, մերձաւորներից,
բարեկամներից,
Քաղւած կրակով, յոշոտւած մտբակով,
Շրջապատւած դահիճների անգութ
ամբոխով...
Թող այս երգը՝ որպէս հնչիւնը մարտական
փողի,
Մեզանից թռչի գէպի լայն աշխարհ՝
թնդայ սրտերով
Եւ թող մեղ համար նա արօթք լինի
մի անշուք թաղման.
Իսկ ձեղ՝ ողջերիդ գոհար օրերի մի
նոր աստիճանը
Կարդասից.

Ազատ, լւաբդ. Գ. Մ.

ՀՆԿԱԾՆԵՐԻՆ.

Յս ձեզ եմ երգում սուրբ մարտիրոսներ,
Որ խուլ գիշերին լուսաջան առած,
Սլացաք հանդէպ ծագող նոր այգին,
Եւ ընկաք ազատ թեթևի տւած,
Ժպիտն երեսին, յոյսերով վասւած:
Զեր յաւէրժ լուծ սուրբ շիրիմներին
Պատիւ, մեծարանք, որ կոյր ամբոխին
Ուսուցիք ատել բռնութիւն, կապանք
Եւ ամբողջ թափով սիրել ազատ կեանք:
Զեր յիշատակին միշտ յաւէրժ յարգանք,
Որ մեղ ուսուցիք սեղմւած շարքերով
Հմբոստ, համարձակ յառաջ արշաւել
Եւ ազատութեան նորածին կուռքին
Դեռաբոյս կեանքեր անահ զոհ բերել
Յս ձեզ եմ երգում, սուրբ մարտիրոսներ,
Որ խաւար գիշերն լուսաջան առած
Հանդէպ վագեցիք ծագող նոր այգին—
Եւ ընկաք հպարտ, մեղ տալով աւանդ—
Նա կապրի միայն, ով զոհ կտայ շատ:

Կմբ.

ԽԱԶԻ ՆԵՐՔՈՅՑ.

Գիշերւան այս սկ, ահոելի խաւար
Չըմիատեցնէ թող քեզ, իմ եղբայր.
Վառ աւետարեր օրւայ է նշան
Այդ արշալոյսի ընկերն անբաժան:

Զես տեսել, ինչպէս մռայլ փոթորկին
Յաջորդում է միշտ լուսագեղ եիկին,
Եւ քաղցր ժողիտով արեգը պայծառ
Գըգուում է կրկին սար, դաշտ ու անտառ...

Խաչիդ տակ ճնշւած դարձեալ դու յուսա—
Փրկութեան քո ժամն անշուշտ պիտի զայ—
Սրեամբ ներկւեցաւ առաջ Գողգոթան
Ապա թէ ծագեց սուրբ օրն յարութեան:

Յօվի Յօվիաննիսեան.



2013

12240

Գինն է 35 կղգ.

Դումարով գնողներին 20% զեղջ:
Յանկացողները կարող են դիմել հետևեալ
հասցեով՝ Ալեքսանդրովյան, տիպ. Մալխա-
սյանց, Ռ. Մարտirosյանց,

